

Հաստատում էմ
Տնօրեն Ա. Հարությունյան
31.08.2022թ.



Արովյանի Ն. Վանյանի
անվան թիվ 5 հիմնական
դպրոց

<<ԱԲՈՎՅԱՆԻ Ն. ՎԱՆՅԱՆԻ
ԱՆՎԱՆ ԹԻՎ 5 ՀԻՄՆԱԿԱՆ
ԴՊՐՈՑ>> ՊՈԱԿ-Ի

ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ
<<Աբովյանի Ն. Վանյանի անվան թիվ 5 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի

IX^բ դասարանի դասղեկ Դիանա Հակոբյան
2022-2023 ուստարի

ԴԱՍԴԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Դասարանի ղեկավարը (այսուհետ՝ դասղեկ), իսկ տարրական դպրոցում՝ դասավարը՝

1) դաստիարակչական աշխատանք է կատարում իր դասարանի սովորողների շրջանում, հայտնաբերում է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված սովորողի (ընտանիքի) և դրա մասին մեկօրյա ժամկետում տեղեկացնում է դպրոցի տնօրենին՝ սերտորեն համագործակցելով մյուս մանկավարժական աշխատողների հետ.

2) մասնակցում է իր ղեկավարած դասարանում սովորողների կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի դիտարկմանը, բացահայտմանը, գնահատմանը և մանկավարժահոգեբանական աջակցության համապատասխան ծառայությունների մշակմանը, դրանց ապահովմանը.

3) նպաստում է սովորողների նկատմամբ դպրոցի և ընտանիքի միասնական մանկավարժական պահանջների կատարման ապահովմանը.

4) անհրաժեշտության դեպքում սովորողների համար կազմակերպում է ուսումնական օգնություն.

5) իրականացնում է դասարանի համար սահմանված գործավարությունը, էլեկտրոնային գրանցումները, դպրոցի տնօրինությանը ներկայացնում սովորողների առաջադիմության, հաճախումների և վարքի մասին տեղեկատվություն.

6) կազմակերպում է սովորողների առողջության ամրապնդմանն ու ֆիզիկական զարգացմանը նպաստող միջոցառումներ, մրցույթներ, նպատակային էքսկուրսիաներ, շրջագայություններ և այլ միջոցառումներ.

7) դպրոցի մանկավարժական խորհրդի քննարկմանն է ներկայացնում սովորողին խրախուսանքի կամ կարգապահական տույժի ներկայացնելու հարցը:

(ՀՀ կառավարության 2002 թ. Հունիսի 25-ի N 1392-Ն որոշում,
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ Օ Ր Ի Ն Ա Կ Ե Լ Ի
Կ Ա Ն Ո Ն Ա Դ Բ ՈՒ Թ Յ ՈՒ Ն , կետ 74)

Սովորողի իրավունքներն ու պարտականությունները

111. Դպրոցում սովորողներն ունեն հավասար իրավունքներ և պարտականություններ:

112. **Սովորողն իրավունք ունի՝**

1) ստանալու հանրակրթության պետական կրթական չափորոշչին համապատասխան կրթություն.

2) ծնողի համաձայնությամբ՝ ընտրելու ուսումնական հաստատությունը և ուսուցման ձևը, ինչպես նաև դպրոցում առկա հոսքը, ստանալու վճարովի կրթական ծառայություններ.

3) անվճար օգտվելու դպրոցի ուսումնանյութական բազայից.

4) ստանալու կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի բավարարմանն ուղղված աջակցություն.

5) մասնակցելու ներդպրոցական և արտադպրոցական միջոցառումների.

6) պաշտպանված լինելու ցանկացած ֆիզիկական և հոգեբանական ճնշումներից, շահագործումից, մանկավարժական և այլ աշխատողների ու սովորողների այնպիսի գործողություններից կամ անգործությունից, որով խախտվում են սովորողի իրավունքները կամ ոտնձգություն է կատարվում նրա պատվի ու արժանապատվության նկատմամբ.

7) դպրոցի կանոնադրությամբ սահմանված կարգով մասնակցելու ուսումնական հաստատության կառավարմանը.

8) ազատորեն փնտրելու և մատչելի կերպով ստանալու ցանկացած տեղեկատվություն՝ բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի.

9) ազատ արտահայտելու սեփական կարծիքն ու համոզմունքները.

10) խրախուսվելու օրինակելի վարքի կամ բարձր առաջադիմության համար.

11) օգտվելու օրենքով և դպրոցի ներքին կարգապահական կանոններով սահմանված այլ իրավունքներից:

113. Սովորողը պարտավոր է՝

1) կատարել դպրոցի կանոնադրության և ներքին կարգապահական կանոններով սահմանված պահանջները.

2) ստանալ հանրակրթության պետական չափորոշիչներին համապատասխան գիտելիքներ, ձեռք բերել և տիրապետել համապատասխան հմտությունների ու կարողությունների, բավարարել սահմանված արժեքային համակարգին ներկայացվող պահանջները.

3) հաճախել և մասնակցել ուսումնական պարապմունքներին.

4) կատարել օրենքով ու դպրոցի ներքին կարգապահական կանոններով սահմանված և Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող այլ պարտականություններ:

114. Հանրակրթական դպրոցն ապահովում է կրթական ծրագրի կատարման անվտանգ և ապահով պայմաններ, բնականոն աշխատանքային ռեժիմ, բժշկական օգնություն և սպասարկում, ինչպես նաև սովորողների ֆիզիկական զարգացման ու առողջության ամրապնդման համար անհրաժեշտ պայմաններ, ձևավորում է անձնական հիգիենայի և առողջ ապրելակերպի հմտություններ՝ համաձայն առողջապահության բնագավառում պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգի:

115. Յուրաքանչյուր սովորող տարեկան առնվազն մեկ անգամ անցնում է բժշկական (կանխարգելիչ) հետազոտություն, որն իրականացվում է դպրոցի բժշկական սպասարկման ծառայության կողմից, իսկ դրա անհնարինության դեպքում՝ տարածքային սպասարկման առողջապահական կազմակերպության կողմից՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին:

116. Դպրոցում կարգապահությունն ապահովվում է օրենքով, կանոնադրությամբ և ներքին կարգապահական կանոններով սահմանված կարգով:

117. Դպրոցի ներքին կարգապահական կանոնները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում օրենքով ու կանոնադրությամբ սահմանված կարգով միջին և ավագ դպրոցների սովորողների նկատմամբ կարող են կիրառվել հետևյալ կարգապահական տույժերը՝

1) նկատողություն.

2) խիստ նկատողություն:

118. Սովորողի նկատմամբ կարգապահական տույժ նշանակելու օրվանից հետո մեկ տարվա ընթացքում կարգապահական տույժը կարող է հանվել, եթե սովորողը նոր կարգապահական խախտում թույլ չի տվել և իրեն դրսևորել է որպես բարեխիղճ, օրինակելի, կարգապահ սովորող:

119. Սույն օրինակելի կանոնադրության 117-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված կարգապահական տույժը մեկ ուսումնական տարվա ընթացքում նույն սովորողի նկատմամբ կրկնակի կիրառվելու դեպքում դպրոցը կարող է դիմել սոցիալական աջակցության բնագավառի լիազոր մարմին՝ երեխայի համար սոցիալական աջակցության ծառայություն կազմակերպելու վերաբերյալ առաջարկությամբ:

120. Սովորողների համար հիմնադրի, նախարարության, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, դպրոցի, ինչպես նաև սոցիալական գործընկերների, կազմակերպությունների, անհատների կողմից կարող են սահմանվել բարոյական և նյութական խրախուսման ձևեր՝ շնորհակալագիր, գովասանագիր, դրամական խրախուսում կամ կանոնադրությամբ սահմանված այլ ձևեր:

107. Դպրոցի սովորողների ինքնավարության և ինքնակառավարման լիազորություններով օժտված ներկայացուցչական մարմինն աշակերտական խորհուրդն է, որն ստեղծվում է ժողովրդավարության և ինքնավարության սկզբունքներին համապատասխան՝ դպրոցի գործունեության կազմակերպմանը նպաստելու, անմիջականորեն իրենց վերաբերող հարցերի մասին սովորողների կարծիքի ազատ արտահայտումն ապահովելու, դրանք դպրոցի կառավարման և խորհրդակցական մարմիններ ներկայացնելու, սովորողների իրավունքների ու պարտականությունների վերաբերյալ դպրոցի կանոնադրության դրույթների պահպանումը վերահսկելու նպատակով և ղեկավարվում է նախարարության կողմից հաստատված աշակերտական խորհրդի օրինակելի կանոնադրությամբ:

108. Աշակերտները կարող են նաև ըստ հետաքրքրությունների ստեղծել ակումբներ, միավորումներ, որոնք աշակերտական ինքնավարության զարգացմանը նպաստող օղակներ են:

(ՀՀ կառավարության 2002 թ. Հուլիսի 25-ի N 1392-Ն որոշում,
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ Օ Ր Ի Ն Ա Կ Ե Լ Ի
Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն)

Ծնողական խորհուրդ

96. Դասարանների ծնողական խորհուրդները (կազմված՝ նախագահից և երկուսից չորս անդամից) ընտրվում են դասարանի ծնողների ընդհանուր ժողովի կողմից՝ մեկ ուսումնական տարվա համար:

97. Դպրոցի ծնողական խորհուրդը կազմավորվում է դասարանների ծնողական խորհուրդների նախագահներից: Ծնողական խորհրդի նախագահն ընտրվում է փակ քվեարկությամբ, ծնողական խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Ծնողական խորհրդի նախագահը մանկավարժական խորհրդի անդամ է:

98. Դպրոցի ծնողական խորհրդի նախագահը խորհրդի նիստից առնվազն երեք օր առաջ խորհրդի անդամներին պատշաճ կերպով տեղեկացնում է նիստի անցկացման տեղի, ժամի և օրակարգի մասին: Ծնողական խորհրդի որոշմամբ՝ նիստի օրակարգում կարող են կատարվել փոփոխություններ:

99. Դասարանական և դպրոցական ծնողական խորհուրդների նիստերն իրավագոր են, եթե դրանց մասնակցում է ծնողական խորհուրդների անդամների ընդհանուր թվի կեսից ավելին: Որոշումներն ընդունվում են քվեարկությանը մասնակցած անդամների ձայների մեծամասնությամբ: Ծնողական խորհուրդների յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք: Ձայնի փոխանցումն արգելվում է:

100. Դասարանական ծնողական խորհուրդների նիստերին մասնակցում են դասղեկները, իսկ դպրոցական ծնողական խորհրդի նիստերին՝ տնօրենը:

101. Համադպրոցական հարցերի քննարկման համար ծնողական խորհուրդը հրավիրում է ընդհանուր ժողովներ: Ուսումնական տարվա ընթացքում, համաձայն դպրոցի ուսումնադաստիարակչական տարեկան պլանի, հրավիրվում են դասարանական ժողովներ՝ առնվազն չորս անգամ, համադպրոցական ժողովներ՝ առնվազն երկու անգամ: Տնօրենի, ծնողական խորհուրդների և դասղեկների նախաձեռնությամբ՝ կարող են հրավիրվել արտահերթ համադպրոցական և դասարանական ծնողական ժողովներ:

102. Դպրոցի ծնողական խորհուրդը՝

1) դպրոցի խորհրդի ձևավորման կարգի պահանջներին համապատասխան՝ իր կազմից առաջադրում է խորհրդի անդամության թեկնածուների: Գրանցված թեկնածուներից ընտրված են համարվում փակ քվեարկությամբ առավել ձայներ հավաքած երկու թեկնածուն:

2) դպրոցի տնօրենի կամ մանկավարժական խորհրդի քննարկմանը ներկայացնում է սովորողների ուսումնադաստիարակչական աշխատանքի բարելավման, մանկավարժների խրախուսման, իրենց պարտականությունների կատարման գործում թերացող մանկավարժներին պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ առաջարկություններ:

3) աջակցում է դպրոցին՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների կազմակերպման գործում:

4) ներկայացնում է ծնողներին անհրաժեշտ մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունները, մասնակցում դրանց մշակման և տրամադրման միջոցառումներին:

5) լսում է տնօրենի հաղորդումը դպրոցի գործունեության վիճակի ու հեռանկարային ծրագրերի մասին, ստանում ծնողներին հետաքրքրող հարցերի պարզաբանումները:

6) ամրապնդում է դպրոցի և ծնողների միջև կապերը, մանկավարժական աշխատողների և ծնողների կողմից երեխաների դաստիարակության նկատմամբ ձևավորում է միասնական պահանջներ.

7) ծնողներին ներգրավում է սովորողների արտադպրոցական և արտադասարանական աշխատանքներում.

8) օգնում է դպրոցին՝ սովորողների հիմնական պարտադիր կրթությունն իրականացնելու գործընթացում.

9) մասնակցում է սովորողների ուսուցման ու դաստիարակության համար անհրաժեշտ պայմանների ստեղծմանը, աջակցում է դպրոցի ուսումնականության բազայի հարստացմանը՝ այդ գործում ներգրավելով հովանավորների.

10) մասնակցում է ծնողագուրկ և սոցիալապես անապահով երեխաներին նյութական օգնություն ցույց տալու աշխատանքներին.

11) աջակցում է արձակուրդների ժամանակ սովորողների հանգստի և ժամանցի կազմակերպմանը.

12) ապահովում է երեխայի իրավունքների պաշտպանությունը դպրոցում.

13) ծնողներին ապահովում է տեղեկատվությամբ, կազմակերպում սեմինարներ, խորհրդատվություններ.

14) ծնողներին ծանոթացնում է իրենց իրավունքներին, պարտականություններին և օրենքով սահմանված պատասխանատվությանը:

103. Դպրոցի ծնողական խորհուրդը համագործակցում է դպրոցի մանկավարժական և այլ խորհուրդների հետ:

104. Դպրոցի ծնողական խորհուրդը կարող է տնօրենի նկատմամբ անվստահության վերաբերյալ առաջարկ ներկայացնել դպրոցի խորհրդին:

105. Ծնողական խորհրդի քարտուղարը կազմում է նիստերի արձանագրությունները: Համադպրոցական և դասարանական ծնողական ժողովների նիստերի արձանագրությունները և ընդունված որոշումները երեք աշխատանքային օրվա ընթացքում հրապարակվում են դպրոցի կայքէջում:

106. Կանոնադրությամբ սահմանված նպատակների իրագործման համար դպրոցի ծնողական խորհուրդը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է իրականացնել այլ լիազորություններ:

(ՀՀ կառավարության 2002 թ. Հունիսի 25-ի N 1392-Ն որոշում,

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՑԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԵԼԻ
Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն)

ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (ԴԱՍԱՐԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ)



2022-2023 ուստարվա սկզբին 9^Բ դասարանում սովորում է 27 աշակերտ, 14 տղա, 13 աղջիկ:

Նախատեսվում է 2022-2023 ուստարվա ընթացքում կատարել`

1. աշակերտների մանկավարժահոգեբանական հետազոտություն
2. կրթության գործընթացում դասարանական կուլեկտիվի փոխհարաբերությունների վերլուծություն, համակարգում, կարգավորում
3. սովորողների սոցիալական պաշտպանություն
4. մանկավարժական աջակցություն աշակերտական ինքնավարության հետ
5. մանկավարժական օգնություն ցուցաբերել դասարանական և դպրոցական ինքնավարության օղակների աշխատանքների կազմակերպմանը:
6. վերահսկել աշակերտների մասնակցությունը խմբակներում, միջոցառումներին

7. Օպերատիվ կերպով՝ դպրոցի տնօրենին, դաստիարակության գծով փոխտնօրենին տեղեկացնել սովորողների վարքի, դպրոցական կանոնակարգի խախտման դեպքում
8. կազմակերպել ուսումնական քառորդում դասարանի կրթադաստիարակչական կենսագործունեության արդյունքների ամփոփում:

2.ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՈՒՍՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ
• Կրթական կողմորոշմանը միտված աշխատանքներ
• Ապահովել կապ գրադարանի հետ
• Պետություն և իրավունք /գրույց/
• Երկրաշարժ և բնական աղետներ/ գրույց/
• Էթկուրսիա դեպի հոգևոր-մշակութային կենտրոն
• Էթկուրսիա դեպի բնության գիրք
• Մասնագիտական կողմորոշում/ գրույց/
• Սեր աշխատանքի նկատմամբ
• Ազգային մտածելակերպի ձևավորում
• Հարգանք քրիստոնեության նկատմամբ
• Մարդասիրական վերաբերմունք բնությանը

3. ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3.1. ՀՈԳԵՎՈՐ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Աշակերտների մոտ սերմանել սեր և հարգանք քրիստոնեության նկատմամբ: Ծանոթացնել հայ առաքելական եկեղեցու պատմությանը: Կատարել պատմական ակնարկ, որը կնպաստի հոգևոր դաստիարակության ձևավորմանը: Այցելել պատմամշակութային վայրեր, եկեղեցիներ:

3.2. ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Նպաստել սովորողների գեղագիտական ճաշակի ձևավորմանը: Ձևավորել գեղեցիկը տեսնելու, գնահատելու, արժևորելու կարողություններ: Ծանոթացնել ազգային ավանդույթներին, տոներին: Կազմակերպել բնության զարթոնքին նվիրված միջոցառումներ: Աշակերտների հետ ստեղծել դասարանական անկյուն, պաստառներ, թեմատիկ նկարներ:

Ամենօրյա շփումը գեղեցիկի հետ նպաստում է երեխայի կողմից գեղեցիկի ընկալմանը, գեղեցիկի կառուցմանը, ստեղծմանը և ի վերջո՝ գեղեցիկ միջավայրում ապրելու ցանկությանը, պահանջմունքի զարգացմանը:

Բարեկիրթ միջավայրը երեխայի գեղագիտական դաստիարակության հիմնական պայմանն է և միջոցը:

3.3. ՌԱԶՄԱՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Ծանոթացնել հայ ժողովրդի հերոսական անցյալին: Սերմանել հարգանք, սեր հայրենիքի, ազատամարտիկների, նորօրյա հերոսների սխրագործությունների նկատմամբ:

Նպաստել ազգային մտածելակերպի ձևավորմանը: Խոսել Արցախյան պատերազմի մասին:
Զրույց-քննարկում կազմակերպել նորօրյա հերոսների մասին:

3.4. ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Հետևել աշակերտների առողջությանը, ֆիզիկական պատրաստվածությանը, կեցվածքին, քայլվածքին, կազմակերպել սպորտլանդիաներ: Նպաստել աշակերտների ֆիզիկական ներդաշնակ զարգացմանը, բարձր աշխատունակության բարձրացմանը: Սովորեցնել հետևել անձնական հիգիենային:

3.5. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Սերմանել դրական վերաբերմունք , սեր աշխատանքի նկատմամբ , սովորեցնել գնահատել ուրիշի աշխատանքը, պահպանել դպրոցական գույքը: Մասնակից դարձնել հանրօգուտ աշխատանքին Կազմակերպել դասարանական հերթապահություն, սովորեցնել խնամել ծաղիկները, մաքուր պահել դասասենյակը,:


3.6. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Զարգացնել պատասխանատու վերաբերմունք շրջակա միջավայրի նկատմամբ :
Կազմակերպել ճանաչողական էքսկուրսիաներ, զրույցներ «Երկրագունդը մեր տունն է » խորագրով:

Բնապահպանական դաստիարակությունը նպատակ ունի երեխայի մեջ ձևավորելու ճանաչողական, բնապահպանական գիտելիքներ, էկոլոգիական գիտակցություն, հուզական, հոգատար, մարդասիրական վերաբերմունք բնության, շրջակա միջավայրի նկատմամբ, բնության հետ հաղորդակցվելու ունակություն, էկոլոգիական կուլտուրա:

3.7. ԴՊՐՈՑ-ԸՆՏԱՆԻՔ ԿԱՊԸ

Կազմակերպել ծնողական ժողովներ: Փոխկապակցված պահել դպրոց-ընտանիք շղթան:
Քննարկել համատեղ լուծման խնդիրներ, կազմակերպել մանկավարժական խորհրդատվություններ, ձևավորել երեխայի դաստիարակության գործընթացի միասնական նպատակներ, ձգտումներ, հայացքներ:



ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնական շաբաթներ	Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարողներ
I	Գիտելիքի և դպրության օր	սեպտեմբեր 1-7	Դասղեկ աշակերտ
II	Ծանոթացում դպրոցի կարգապահական կանոններին:	սեպտեմբեր 12-16	Դասղեկ աշակերտ

III	Սովորողների իրավունքներն ու պարտականությունները:	սեպտեմբեր 18-23	Դասղեկ աշակերտ
IV	Զրույց-քննարկում «Հայաստանը ես եմ» թեմայի շրջանակում:	սեպտեմբեր 26-30	դասղեկ աշակերտ
V	Հանդուրժողականություն:	հոկտեմբեր 2-7	Դասղեկ աշակերտ
VI	Մասնագիտական կողմորոշմանը միտված աշխատանքներ:	հոկտեմբեր 10-14	Դասղեկ աշակերտ
VII	«Եկեղեցին և ազգը» թեմայի շուրջ քննարկում՝ հիմնավորելով եկեղեցու դերը ազգապահպանման գործում:	հոկտեմբեր 17-21	Դասղեկ աշակերտ
VIII	«Մերօրյա հերոսները» քննարկում:	հոկտեմբեր 24-30	դասղեկ աշակերտ
IX	Կիրեոսանվտանգություն, համացացնցից օգտվելու կանոնները:	նոյեմբեր 7-11	Դասղեկ աշակերտ
X	Մխալների նկատմամբ ճիշտ վերաբերմունքի դրսևորում:	նոյեմբեր 14-18	Դասղեկ աշակերտ
XI	Պատասխանատվություն	նոյեմբեր 20-25	Դասղեկ աշակերտ
XII	Ընկերասիրություն, համերաշխ դասարան:	նոյեմբեր 28- դեկտեմբեր 2	Դասղեկ աշակերտ
XIII	Բնական աղետներ/ պաշտպանության	դեկտեմբեր	Դասղեկ

	միջոցները/:	5-9	աշակերտ
XIV	Իմ երկրի, շրջապատի առկա խնդիրները և լուծման ուղիները:	դեկտեմբեր 12-16	Դասղեկ աշակերտ
XV	Խոսքի ուժը	դեկտեմբեր 19-23	Դասղեկ աշակերտ
XVI	Կիսամյակի արդյունքների ամփոփում	հունվար 9-13	Դասղեկ աշակերտ
XVII	Մաքառող հայր	հունվար 16-20	Դասղեկ աշակերտ
XVIII	Հայոց բանակ	հունվար 23-27	Դասղեկ աշակերտ
XIX	Քանի լեզու գիտես, այնքան մարդ ես: Նպատակն է ձևավորել աշխարհայացք	հունվար 30- փետրվար 3	Դասղեկ աշակերտ
XX	Մաքրությունն՝ առողջության երաշխիք:	փետրվար 6-10	Դասղեկ աշակերտ
XXI	Գնահատի՛ր ժամանակը	փետրվար 13-17	Դասղեկ աշակերտ

XXII	Գիրքն իմ կյանքում:	փետրվար 20-24	Դասղեկ աշակերտ
XXIII	Ինչպե՞ս հաղթահարել ծուլությունը	փետրվար 27- մարտ 3	Դասղեկ աշակերտ
XXIV	Էկոլոգիական խնդիրներ: Ի՞նչ եմ անում բնության պահպանման համար	մարտ 6-10	Դասղեկ աշակերտ
XXV	Վատ և լավ սովորություններ	մարտ 13-17	Դասղեկ աշակերտ
XXVI	Քաղաքացիություն:	մարտ 20-24	Դասղեկ աշակերտ
XXVII	Չերոսի ուղին/ գրույց-քննարկում/	ապրիլ 3-7	Դասղեկ աշակերտ
XXVIII	Ապրելու ապրիլ/ դաս- ցուցադրություն/	ապրիլ 10-14	Դասղեկ աշակերտ
XXIX	Հայոց վիշտը / սահիկի միջոցով քննարկում/:	ապրիլ 17-21	Դասղեկ աշակերտ
XXX	Խտրականության բացառում	ապրիլ 25-28	Դասղեկ

**ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱՍԻՐԱԿԱՆ, ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ, ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ
ԽՄԲԱԿՆԵՐԻՆ**

	Նախասիրական-	Գեղարվեստական,	Մարզական	Այլ խմբակ
--	--------------	----------------	----------	-----------

	առարկայական խմբակ	երաժշտական խմբակ	խմբակ	
1				
2				
3				
4				
5				
6				
7				
8				
9				
10				
11				
12				
13				
14				
15				
16				
17				
18				
19				
20				
21				
22				
23				
24				
25				
26				
27				

ԴԱՍՂԵԿԻ ԴԱՍՏԻԱՐԱԿԶԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԹԵՄԱՏԻԿԱՆ

Անցկացման օրը	Դասողեկի անցկացման միջոցառման (դասախոսություն, զրույցներ, դիտողական արշավներ, էքսկուրսիաներ և այլն) բովանդակությանը	Ծանոթություն
09.09.2021	<<Պահպանել սանիտարահիգիենիկ կանոնները՝ կորոնավիրուսից խուսափելու համար>>:	
16.09.2021	<<Հայաստանի գին և անջանի կերպարները>>:	
23.09.2021	<<Մեր երկրի հերոսական անցյալը>>:	
30.09.2021	<<Իմ վարքը տանը և դպրոցում>>:	
07.10.2021	<<Պատերազմը չարիք է, մենք խաղաղություն ենք ուզում>>:	
14. 10.2021	<< Երբ արժևորվում է ուսուցիչը>>:	
21. 10.2021	<< Ես ապրում եմ ազատ երկրում>>:	
12. 11.2021	<<Ճանաչենք մեր մեծերին >>:	
19. 11.2021	<<Հայրենիքի սերը՝ կյանքից առավել >>:	
26. 11.2021	<<Խաղաղ ապրելու իրավունք ունեն աշխ. բոլոր երեխաները >>:	
03. 12.2021	<<Իմ տունն իմ հայրենիքն է>>:	
10. 12.2021	<< Ամանորն ինչպես են նշում աշխարհում>>:	
17. 12.2021	<<Ինչպե՞ս անցկացնեմ ձմեռային արձակուրդներս>>:	
24. 12.2021	«Գիրքը իմ լավագույն բարեկամն է»:	
13. 01.2022	«Աշակերտների զբաղվածությունը»:	
20. 01.2022	՝ «Իմ անկյունն ու փոքրիկ գրադարանը»:	
27. 01.2022	«Բանակը պետության ամրոցն է»:	
03. 02.2022	«Աշակերտների զբաղվածությունը»:	
10. 02.2022	« Իմ հայրենիքի պատմության կարևոր էջերը»:	
17. 02.2022	Ժ «Մեր ազգի պահողը լեզուն է.....»:	
24. 02.2022	« Իմ հետաքրքրություններն ու նախասիրությունները»:	

03. 03.2022	«Մայրը սուրբ է.....»:	
10. 03.2022	« Մարտի 8-ն ինչպես են նշում աշխարհում»:	
17. 03.2022	«Պաշտպանել բնությունը,նշանակում է պաշտպանել հայրենիքը»:	
31. 03.2022	«Ոչ վտանգավոր սովորություններին»:	
07. 04.2022	«Հայկական բարձրարժեք մշակույթը»	
14. 04.2022	«Մենք հայ ենք...»:	
21. 04.2022	«Բոնությունը թույլերի զենքն է»:	
28. 04.2022	«Միասնությունը ուժ է »	
05. 05.2022	«ԻՆչ սպորտաձև եմ նախնտրում» :	
12. 05.2022	<<Ինչպես նայել ճշմարտության այքերին>:	
19. 05.2022	«Իմ երկրի առաջատարուժը ես եմ>>:	
26. 05.2022	«Ինչ գրքեր եմ նախընտրում կարդալամառային արձակուրդներին»:	
Ուստարվա ղնթացք	Նախատեսված այցեր թանգարան, պատկերասրահ, բնության գիրկ	

ԴԱՍՂԵԿԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԹԵՄԱՏԻԿԱՆ

ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԴԺՎԱՐ ԴԱՍՏԻԱՐԱԿՎՈՂ

ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԲԱՐԵՆՊԱՍՏ ՎԻՃԱԿՈՒՄ ԳՏՆՎՈՂ,

ԾՆՈՂԱԶՈՒԻԿ, ԿԱՊԿՈՒ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՀԵՏ

Անցկացված աշխատանքների	Աշակերտների ազգանուն, անուն	Դաստիարակչական աշխատանքների	Կատարած դաստիարակչական	Լրացուցիչ տեղեկութ
------------------------	-----------------------------	-----------------------------	------------------------	--------------------

ԾՆՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ

Անցկացման օրը	Քննարկվող հարցեր	Ժողովի համառոտ բովանդակությունը	Ծանոթություն

ԾՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԸ

Նախագահ՝
անդամներ՝
քարտուղար՝

ԱՇԽԱՏԱՆՔ ԾՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԵՏ

Անցկացման օրը	Քննարկվող հարցեր	Ծնողկոմիտեի նիստի համառոտ բովանդակություն	Ծանոթություն

Անհատական աշխատանքներ ծնողների հետ

Օրը՝

Նպատակը՝

Արդյունքը՝

Օրը՝

Նպատակը՝

Արդյունքը՝

Օրը՝

Նպատակը՝

Արդյունքը՝

Օրը՝

Նպատակը՝

Արդյունքը՝

Օրը՝

Նպատակը՝

Արդյունքը՝

ԴԱՍԱՐԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ՈՒՍԱՐԿԱ ԱՎԱՐՏԻՆ



